

ՆԱՊՈԼԵՈՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

ԺԱՆՊԻՆՌ ՄԱՆԵ

(Փարիզ)

1801 թվականին Վրաստանի միացումը Ռուսաստանին միանգամից վերջ տվեց այն հավասարակշռությանը, որ դժվարությամբ հաստատվել էր 17-րդ դարի սկզբին Մերձավոր Արևելքի գլխավոր պետությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև, երբ վերջիններս կիսել էին Հայաստանը իրար մեջ 1639 թ.:

Այն ժամանակվանից ի վեր հայ խոջանները սփռվել-տարածվել էին հին և նոր աշխարհի բոլոր ցամաքային և ծովային ճանապարհների վրա, Հեռավոր Արևելքից մինչև Բալթյան նավահանգիստները, Հյուսիսային ծովից մինչև Միջերկրական: Նրանք մեծ օգնություն էին ցուցաբերում թե՛ սփյուռքը կազմակերպելու և թե՛ մայր հայրենիքի վիճակը բարելավելու գործին: Բացի այդ, նրանք հույս էին տածում, թե Արևմտյան պետությունները կկարողանան օրերից մի օր Հայաստանի անկախությունը վերականգնելուն նպաստել, և նրանց վերաբերմունքը քիչ թե շատ հեշտացրեց Ռուսաստանի առաջին քայլերը Անդրկովկասում:

Ջուղահոնարար արևելագիտության զարգացումը Արևմուտքում նոր հետաքրքրություն առաջացրեց 19-րդ դարի սկզբին դեպի հայ մատենագրությունը, որի գլուխգործոցները հրատարակվում էին Վենետիկի, իսկ հետո՝ Տրիեստի և Վիեննայի Մխիթարյան վարդապետների կողմից:

Ահա այդ հանգամանքները թույլ են տալիս հասկանալ, թե ինչո՞ւ կամ ինչպե՞ս նախ Բոնապարտ զորավարը, իսկ հետո Նապոլեոն կայսրը, թեպետև Հայաստանով հատկապես չէր հետաքրքրվում, բայց հանդիպել է մի քանի հայերի հետ և երբեմն այնպիսի որոշումներ է կայացրել, որոնք անհետևանք չեն մնացել հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա:

1798 թ. Եգիպտոսի պատերազմի ժամանակ Բոնապարտը պայքարեց Եգիպտական նավատորմի դեմ: Նավերը զինված էին որակյալ թնդանոթներով, և ամիրապետը, Արդ-էր-Ռաման Գաբարդիի վկայությամբ, հայ էր՝ Մուալլեմ Նիկողոս անունով: Պատերազմի ընթացքում Նիկողոսը դերի ընկավ Ֆրանսիացիներին և բանտարկվեց Կահիրեի ամրոցում: Դրանից մի քանի տարի առաջ Ալի բեյի պատգամավորությունը, որն առաջնորդում էր հայ Ցաղուրը, գնել էր Նիկողոսի օգտագործած թնդանոթները Օտլով իշխանից: Մրագրում էին օգտագործել օսմանցիների դեմ, որովհետև այդ ժամանակ ոչ ոք չէր կարող ենթադրել, որ Ֆրանսիացիները կհարձակվեն Եգիպտոսի վրա:

Բարեկամություն անելով դպտիների հետ՝ Ֆրանսիացիները վերացրին Եգիպտոսում ապրող հայերի առևտրական արտոնությունները: Այդուամենայնիվ, քանի որ մահմեդականները անխտիր բոլոր քրիստոնյաներին դավահանության մեջ էին մեղադրում, հայերը ստիպված եղան իրենց թաղամասե-

ըր պաշտպանել: Այդպիսով, կամա թե ակամա, ֆրանսիական զորքերի գործը հեշտացրին:

Բացի այդ, մամլուկների շարքերից ծագումով քրիստոնյա շատ երիտասարդներ, դրանց թվում և շատ հայեր, Բոնապարտին միացան ու հետագայում Ֆրանսիա տեղափոխվեցին իրենց անվտանգութունը պաշտպանելու նպատակով:

Հանրահայտ է, որ Նապոլեոնը համախմբեց նրանց երկու շոկատի մեջ, որոնցից ընտրեցին իր անձնական թիկնապահներին: Կայսերական գվարդիայի մայր ցուցակում արձանագրվել է 582 զինվոր: Դրանցից մի քանիսը անկասկած հայ են եղել. օրինակ, բրիգադիր Բաղդասար Արմենի, Հակոբ Արմենի, Հովսեփ Արմենի, կրտսեր Հովսեփ Արմենի, ենթասպա Օհանիս Արմենի, ավագ Օհանիս Արմենի, կրտսեր Օհանիս Արմենի, ենթասպա Թունիս Արմենի, ենթասպա ավագ Ազարիա, լեյտենանտ կրտսեր Ազարիա, կապիտան Շահեն, պատվո լեգեոնի ասպետ Հովհաննես Մարտիրոս, ավագ Միրզա, լեյտենանտ ավագ Միրզա, որին նաև կոչում էին Դանիել Անանիա, և Պարոտս, որը 1808 թվից ծառայել է Իտալիայի փոխարքային:

1962 թ. Ղարաբաղի Հովհաննես Հովհաննեսբեկովը Մատենադարանին նվիրեց իր պապի հորը վերաբերող արժեքավոր փաստաթղթեր, որոնք 1987 թ. վերլուծվեցին փարիզահայ պատմաբանի՝ լուսահոգի Սարգիս Աֆանասյանի կողմից¹: 1841 թ. փետրվարի 26-ին գեներալ Գոլովինին ուղղված նամակում գրված է հետևյալը. «Ղարաբաղի բնակիչն՝ Հովհաննես Պետրոսովս, փոքր հասակիս հափշտակվեցի մամլուկների կողմից: Նրանք ինձ վաճառեցին Օդրիպտացիներին: Նապոլեոն Բոնապարտի Եգիպտոսում վարած պատերազմի ժամանակ որոշեցի ֆրանսիացիներին ծառայել և դարձա մամլուկյան շոկատի անդամ: Ծառայել եմ անընդհատ մինչև Վաթերլոոյի ճակատամարտը: Ծանր վիրավորվելով Աուստերլիցի ճակատամարտի ժամանակ՝ պարզևատըրվել եմ պատվո լեգեոնի շքանշանով և թոշակ եմ ստացել տարեկան 250 ֆրանկ մինչև 1816 թ.: Այն ժամանակ Ֆրանսիայից հեռացա և Ալեքսանդր կայսեր թուլլովությամբ Ղարաբաղում հաստատվեցի, Հանգուցյալ արքան նամակով խոստացավ թոշակս վճարել: Այդ կայսրությանը օգնելու նպատակով պայքարել եմ նախ լեզգիներով. իսկ 1826—28 թթ.՝ պարսիկների դեմ: Զբավորության մեջ ընկնելով 1828 թ. դիմել եմ Թիֆլիսի զինվորական կառավարչին՝ գեներալ լեյտենանտ Սինտգինին թոշակս ստանալու համար: Եվ այլն...»²:

Սակայն Նապոլեոնի ամենահռչակավոր մամլուկն է եղել Ռուստամ Ռազան, որը ծնվել է Թիֆլիսում մոտավորապես 1780 թ.: Հոր անունը էր Ռուստամ Հոնան (այսինքն՝ Հովնան): Ավագ անունով հարազատ հղբայր ուներ: Յոթ տարեկանում թաթարների կողմից առևանգվել է և վաճառվել Կահիրեում: Պատկանել է նախ Սալա պէյլին, իսկ հետո Բոնապարտի դաշնակից Շեյխ էլ Բեկրիին: Նապոլեոնը նրան վերցրեց իր հետ Եվրոպա վերադառնալու ժամանակ: Ռուստամը դարձավ իր թիկնապահը և ամենամտերիմ ծառան: Պատկում էր իր սենյակի շեմին և ընկերակցում էր նրան բոլոր պատերազմների ժամանակ: Լորտոյի կամուրջը կառուցելուն պես Վագրամի ճակատամարտից մի քանի ժամ առաջ Նապոլեոնը ուզում է ինքն անձամբ զննել դաշտը և թշնամու դիրքերը: Հրաժեշտ է տալիս բոլոր գեներալներին՝ հայտնելով, որ կարիք ունի միմիայն երկու բանի՝ հեռադիտակի և Ռուստամի:

¹ Afanasyan Serge, «Ouannis Petro Mamebuk de Napoléon», Azad Magazine, Grenoble, 2eme trimestre, 1987, N 38.

² Նույն տեղում, էջ 18:

1814 թ. պարտություններից հետո Ռուստամը լքեց կայսրին: Իբր թե նա սյուլեոնն ուզում էր ինքնասպանություն գործել, իսկ Ռուստամը (որը շառխելացի անձնավորություն չէր) վախեցել է, որ իրեն կմեղադրեն կայսեր սահվան մեջ:

Համենայն դեպս պետք է վճռականապես հերքել մի քանի պատմաբանների հնարած այն անհիմն առասպելը, թե Ռուստամը վերադարձել է Կովկաս և ծառայել ռուսներին 1826—28 թթ.: Իրականությունը ավելի զվարճալի է: Նապոլեոնի անկումից հետո Ռուստամը ապրում էր իր գնած տան մեջ Փարիզից ոչ հեռու Դուրդան գյուղաքաղաքում, Լյուդովիկոս 18-րդի ոստիկանության հսկողության տակ: Մի օր ոստիկանները հայտնում են պետերին, թե Ռուստամը անսպասելի Հյուսիսային Ֆրանսիա է գնացել և Անգլիա փախել: Ի՞նչ կասկածելի նպատակով է օտար երկիր մեկնում: Հետևում են իրեն և խմանում, որ փող աշխատելու նպատակով ելույթ է ունենում Լոնդոնի կրկեսում՝ իր փառավոր համազգեստը հագած:

Ֆրանսիա վերադառնալով՝ մնում է Դուրդանում իր տիկնոջ (Նապոլեոնի ծառայի՝ Դուվիլի դստեր) և իր որդու՝ Աքիլլեսի հետ: Մահացել է 1845 թ.: Իր անունով լույս է տեսել հուշերի մի գրքույկ: Առաջին մասը գրել է ինքը աղավաղված ֆրանսերենով՝ հետևելով դեպքերի ժամանակագրական կարգին: Երկրորդ մասը հորինվել է գրագետ մարդու կողմից՝ Ռուստամի հեռու՛նեցած խոսակցությունների հիման վրա: Ամբողջ տեքստը շատ միամիտ է, բայց լեցուն հետաքրքրական և զվարճալի մանրամասնություններով:

Արևելյան լեզուների ուսուցումը Ֆրանսիայում մեծ զարգացում ապրեց Նապոլեոնի օրոք: 1790 թ. Լուի Լանգլեսը մի ուշագրավ գրքույկ հրատարակեց հետևյալ վերնագրով՝ «Արևելյան լեզուների կարևորությունը առևտրի զարգացման, ինչպես նաև գիտությունների և գրականության առաջադիմության գործում»³: 1794 թ. նույն Լանգլեսին հաջողվել էր մի քանի դասընթաց կազմակերպել Փարիզի ազգային գրադարանում, իսկ 1795 թ. մարտի 30-ին խորհրդարանի կոնվենտի որոշումով հիմնադրվեց Արևելյան լեզուների պետական ուսումնարանը: Այդ նոր հիմնարկությունը ժառանգորդն էր 1669 թ. եզուիտների վարժարանում Կուլբերտի ստեղծած արևելյի երիտասարդների դպրոցի: Նախատվեր այն ժամանակ լոկ քաղաքական էր: Ականավոր դիվանագետ Սավարի դը Բրեվը, որը 1604 թ. պատրաստել էր Սուլթան Ահմեդի և Հենրի 4-րդի ստորագրած դաշնագիրը, գաղտնի գրություն էր թողել՝ «Համառոտ ճառ այն մասին, թե ինչ միջոցների պետք է դիմել Օսմանյան կայսրությունը կործանելու համար»⁴: Այդ միջոցներից մեկն այն էր, որ ուզում էր, հենվելով քրիստոնյա փոքրամասնությունների վրա, պատանի թարգմանիչներ դաստիարակել Ֆրանսիայի շահերին ծառայելու նպատակով: Այդ պատանիներին ընդհանրապես «Arméniens» էին կոչում, թեպետև նրանց թվում կային հայերից բացի նաև ուրիշ ազգեր: Հետևաբար հայերեն լեզուն անհրաժեշտ էր համարվում: Նախապես սկսել էին դասավանդել արաբերեն, թուրքերեն և պարսկերեն, ուստի շուտով որոշեցին նաև հայերեն սովորեցնել: Բայց ո՛չ դասախոս կար, ո՛չ էլ ուսուցիչ:

Նապոլեոնը պատահաբար գտավ հարմար անձնավորություն Իտալիայի պատերազմի ժամանակ: Այդ գործի հանգամանքների վրա լույս է սփռվել

³ L. Langlès, «De l'importance des langues orientales pour l'extension du commerce, les progrès des lettres et des sciences». Paris, 1790 (Pétition à la Convention).

⁴ F. Savary, seigneur de Brèves, Discours abrégé des assurez moyens d'anéantir et ruiner les monarchies des princes ottomans, s. l. n. d. (Paris, BN 4°, Lg 68).

վերջերս Պոլսեցի պատմաբան Գևորգ Բամպուքճյանի հրատարակած նորահայտ փաստաթղթի շնորհիվ⁵ 1815 թ. դեկտեմբերի 3-ին Փարիզում գրված նամակով հայերենի դասախոսը՝ Շահան Զրպետյանը, տեղեկացնում է Մոսկվացի ազգային համբավվոր բարերար Հովհաննես Լազարյանցի Հովակիմ եղբորը՝ թե՛ իր գերդաստանի և թե՛ Նապոլեոնի հետ ունեցած իր հանդիպման մասին:

Նամակի բովանդակությունը կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Կլիկիայի թագավորության անկումից հետո, 1375 թ., Լևոն 6-րդ թագավորի փեսա Շահան իշխանի եղբայրը՝ Թովմաս Շահանը, ապաստան է դնում Աղվանքի Պարտավ քաղաքում թաթար իշխանների մոտ: Լենկ Թեմուրի արշավանքի ժամանակ ամբողջ գերդաստանը գաղթում է Ուոհա (Եդեսիա) և ծալայում է մերթ քուրդ և մերթ արաբ իշխաններին: Հակոբ Շահան Զրպետյանը ծնվել է 1772 թ. դեկտեմբերի 16-ին: Հայրը՝ պարոն Սարգիս Շահանը, նրան դաստիարակել է տալիս Բաղիշեցի Պողոս վարդապետ Ավդալյանի մոտ: 1787 թ. աշակերտը և ուսուցիչը ուղևորվում են դեպի Սիրիա, Երուսաղեմ, Միջերկրականի կղզիներ՝ «աշխարհաց տեսութեան աղագու», և հասնում են Հոռմ 1789 թ.: Այնտեղ բաժանվում են իրարից: Հակոբ Շահանը գնում է Ֆիրենզե և Լիվոռնո՝ օտար լեզուներ և իրավագիտություն ուսումնասիրելու համար: Երբ ֆրանսիացիները գալիս են Իտալիա, ուզում են պետականացնել և գրավել բոլոր եկեղեցական գույքերն ու կալվածները: Որպեսզի իրենց եկեղեցին խնայվի, Լիվոռնոյի հայերը հանձնարարում են Հակոբ Շահանին տեսակցել Բոնապարտին և բացատրել իրավիճակը:

Խոսքը տալիս եմ իրեն՝ Զրպետյանին՝ այդ կարևոր տեսակցության մասին արտահայտվելու համար. «Յետոյ ի գալ Գաղղիացուց յԻտալիա, և յառնելն իմ ըստ տեսութիւն ընդ Նապոլեոնի, որ մեծ սպարապետ էր յայնժամ, վասն ազգային իրաց ինչ և եկեղեցույ Հայոց Լիվորնա քաղաքի նոյնպէս և ի մտերմանալն իմ ընդ այլ երեւելի պաշտօնատարաց Գաղղիացուց, հրաւիրեալ իղէ ի ծերութենէն գալ աստ. որ և եկի իսկ ի յամսոջ օգոստոսի 1798-ին, ի սոյն Փարէզ քաղաք ի ժամանակին որ արդեն Նապոլէոն էր յԾգիպտոս, և յետ 16 աւուրց ժամանելոյս աստ կալայ ի տերութենէն զպաշտօն ինչ ի գրատան: Ի գալ Նապոլէոնին յԾգիպտոսէ աստ ընկալայ ի նմանէ և զայլ ինչ պաշտօն ևս ի նոյն գրատան, և միշտ մնալով ի նմին յաւել Տէր և զշնորհ իւր միշտ ի պէտս ծառայիս»⁶:

Բանն այն էր, որ Հակոբ Շահանը ֆրանսերենին չէր տիրապետում: Նախ հայկական ձեռագրեր տեղադրեց Փարիզի ազգային գրադարանում, իսկ 1799 թ. սկսեց հայերեն դասավանդել Արևելագիտական ուսումնարանում: Սակայն ֆրանսերենը կատարելագործելու նպատակով ստիպված ընդհատեց աշխատանքը 1801 թ. և վերսկսեց միմիայն 1811 թ.: Իր ուսուցչական գործունեության մասին ինքն է պատմում. «Գրատուն մեր հաստատեալ է միանգամայն լասն Հայոց, Գաղղիացուց և այլ ամենայն ազգաց, զի բազումք յօտար աշխարհաց ևս, արք երեւելիք, գիտնական արք քառասնամեայ և ավելի ևս գան աստ առ ի յուսանիլ. զի լեզու մեր է մին ի հնագոյն ի սուրբ և ի մայր լեզուաց, մինչև զարմացուցանել զգիտունս թէ քանի հնագիտութիւնս արմատս նախնական լեզուի աշխարհիս և զայլ անգիտ տեղեկութիւնս զվաղեմի պատ-

⁵ Տե՛ս Գ. Բամպուքճեան, Յակոբ Ծախան Զրպետեանի (1772—1897) Արաճայտ մեկ համակը ուղղեալ իշխան Յովակիմ Լազարեանցի (1743—1828), «Արմաշ» պարբերագիրք (Մոսկորեալ), 4/2 (8), 1987, էջ 20—23:

⁶ Գ. Բամպուքճեան, Աշխ., էջ 23:

ժուժիանց և զծագմանէ ազգաց գաղտնեալ գտանին իրր անփորձ հանք կամ անտաշ զոհար»⁷:

Հակոբ Շահանի ուսանողներից են եղել իր Վայան դը Ֆլորիվալը՝ Մովսես Խորենացու և Եզնիկի Թարգմանիչը, որը նրան հաջորդեց 1827 թ., Բելոն, որը 1812 թ. Հայոց լեզվի համառոտ նկարագրութուն հրատարակեց⁸, Սեն Մարտենը՝ հռչակավոր հնագետ ու արևելագետ: Ինքը՝ Զրպետյանը, Սեն Մարտենի համագործակցութեամբ հրատարակեց 1806 թ. պատմագիտական ժողովածու հետևյալ վերնագրով՝ «Հետաքրքիր հետազոտութուններ Ասիայի հին պատմության մասին, կայսերական Մատենադարանի ձեռագրերի հիման վրա»⁹: 1811 թ. Զրպետյանի ֆրանսերեն Թարգմանութեամբ լույս տեսավ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության ծաղկաբաղ խաչակիրների պատմության մասին¹⁰: Նա պատրաստեց նաև նույն մատենագրի Փարիզում պահպանված հայերեն ձեռագրերի նկարագրութունը¹¹: 1813 թ. հրատարակեց նաև իր հեղինակած «Հայաստանի համապատկերը»¹²:

1812 թ. Մոսկվայում նապոլեոնը որոշում ստորագրեց Շահանին պրոֆեսորի կոչում շնորհելու մասին: Այդ դեպքը մեծ արձագանք ունեցավ ամբողջ սփյուռքում: Փարիզի ազգային գրադարանի 279 համարի ձեռագիրը բովանդակում է «Հայերեն լեզվով բացատրված արաբերենի քերականութուն»¹³, որը ձեռնված է «Մեծն նապոլեոնին՝ ֆրանսիացիների կայսերը և Իտալիայի թագավորին, Փարիզում նոր հաստատված հայերենի դասընթացի ուսանողների կարիքների համար... Երևանցի Մարգար Զաքարիա Գեղամ Կոզեցի կողմից Սանկտ Պետերբուրգում»: Մարգար Զաքարիան Սևանա լճի իշխանական գերդաստանի տերն էր: 1780 թ. Ռուսաց թագավորի միջամտութունն էր խնդրել, իսկ 1804 թ. ռուսների Կովկաս մտնելուն պես ապաստանել էր Սանկտ Պետերբուրգում: Փարիզում ունենք նաև Ն. Յրանկյանի անվան թանգարանում նույն Թարգմանչի ձեռագիր Ախտարք¹⁴:

Իր ժամանակակից բոլոր մտավորականների պես Զրպետյանը մեծ ուշադրութեամբ էր հետևում ռուսների առաջխաղացմանը դեպի Հայաստան: Նապոլեոնի անկումից հետո 1816 թ. հրատարակեց «Խորհուրդ առ այն Հա-

⁷ Պ. Բամպուրենազ, Աշվ. աշխ., էջ 28:

⁸ St'u M. Bellaud, Essai sur la langue arménienne, Paris, 1812.

⁹ J. Chahan de Cirbied et Saint-Martin J., Recherches curieuses sur l'histoire ancienne de l'Asie, puisées dans les manuscrits orientaux de la Bibliothèque Impériale, Paris, 1806.

¹⁰ St'u Matthieu d'Edesse, Détails historiques de la première expédition des Chrétiens dans la Palestine (p.) par J. Saint-Martin et J. Chahan de Cirbied, Paris, 1811.

¹¹ St'u J. Chahan de Cirbied, Notice de deux manuscrits arméniens contenant l'histoire de Matthieu Eretz, Paris, 1812.

¹² J. Chahan de Cirbied, Tableau général de l'Arménie, Paris, 1813 (Discours préliminaire et table analytique).

¹³ F. Mader, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, N 279, p. 145. «Grammaire arabe, expliquée en arménien, dédiée à sa Majesté, au premier Napoléon le Grand, empereur des Français et roi d'Italie, à l'usage des élèves du cours d'arménien nouvellement établi dans la ville de Paris. Traduite et rédigée d'après les meilleurs auteurs originaux par Marcar Zacarie de Gellam Kogentz de la ville d'Erivan. l'an 1811. mois de septembre à Saint-Petersbourg». Նույն գիրքը արտագրեց նաև Փարիզում գտնվող մի ուրիշ ձեռագիր, տե՛ս Fondation Nourhan Fringhian, Trésors du pays d'Arménie, 3^{me} édition, Musée Arménien de France, Paris, 1989, p. 5, n° 67 «Livres de divination daté de 1789, écrit à Saint-Petersbourg par Markar Ghéghamian Khodjents d'Erévan et offert à l'Empire Russe».

¹⁴ Ախտարքը արաբերենից Թարգմանված աստղաբաշխական քուլանդակութեամբ գիրք է:

յերը, որոնք ապրում են Ռուսաց կայսրութեան հարավային շրջանում, բաժ-
բակի մշակութեան մասին»¹⁵, իսկ 1818 թ.՝ «Հայոց պատմութիւն. Այս դարի
սկզբին Վրաստանում և Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփո-
խութիւնների բացատրութեամբ»¹⁶, ինքն էլ Ռուսաստանին ծառայեց 1827
թվից: 1830 թ. Պասկևիչի հրամանով դարձավ «պոլոժնիե» (եկեղեցական
սահմանադրութիւն) պատրաստող զաղտնի հանձնաժողովի անդամ: Այնու-
ամենայնիվ, շափազանց հավատարիմ մնաց նապոլեոնին մինչև վերջ:

Բացի Փարիզում բացված հայագիտական ամբիոնից, Եվրոպայի արե-
վելագետները կարող էին հայերեն սովորել Վենետիկում հաստատված Մխի-
թարյան միաբաններից: Տեղեկանալով, որ այդ աբեղաները զբաղվում են գի-
տութեամբ, ֆրանսիացիները չպետականացրին նրանց գույքը և կալվածները:
Այդպիսով, 19-րդ դարի առաջին տարիներին վարդապետները կարողացան
արժեքավոր հուշարձաններ՝ հին և միջնադարյան բնագրեր հրատարակել:
Հատկապես նշելի են 1805 թ. լույս տեսած Հովհաննես Զորհայանի Աստ-
վածաշնչի գիտահամեմատական բնագիրը, ինչպես նաև 1810—1815 թթ. Մը-
կերտիչ Ավգերյանի կազմած 12 հատորանոց «Լիակատար վարք սրբոց» աշ-
խատութիւնը:

1809 թ. դեկտեմբերի 20-ին Պավիայի համալսարանի ռեկտորը՝ Ժոզեֆ
Հագերը, դիմում ներկայացրեց Իտալիայի փոխարքա էժենին, որպեսզի նյու-
թական օգնութիւն ցույց տա Մխիթարյան միաբաններին հայ պատմիչների
լիակատար շարքը հրատարակելու գործում: Այս դիմումը անմիջական ար-
դյունք չի ունեցել: Սակայն 1810 թ. օգոստոսի 17-ին Սեն-Փլու պալատում
նապոլեոնը որոշում ստորագրեց Մխիթարյանների ողջ գույքը և կալվածները
պաշտպանելու մասին: Նույն տարվա սեպտեմբերի 3-ին կայսեր որոշումը
Սուրբ Ղազար բերեց Պիեռ անունով մի հայ պատգամավոր, որի մասին ա-
սում են, թե Արցախ նահանգի Վարարակն (այժմ Ստեփանակերտ) գյուղում
էր ծնվել: Կարելի է նաև ենթադրել, որ նա նախկին մամուլի Պետրոսն է եղել,
որն Իտալիայի փոխարքայի ծառան էր դարձել: Կայսերական որոշումը միա-
բանութեանը շնորհում էր «Գիտութիւնների և դրականութեան հայկական Ա-
կադեմիա»-յի փառավոր տիտղոսը: 1773 թ. Մխիթարյանների մի մասը Վե-
նետիկից հեռանալով հաստատվել է Տրիեստում: 1811 թ. չցանկանալով ապ-
րիայի կայսեր թուլլտվութեամբ հայագիտութիւնը զարգացրին գերմանախոս
պետութիւններում:

Սակայն հայերի ճակատագիրը այն ժամանակ Եվրոպայում չէր որոշվում,
այլ՝ Հարավային Կովկասում: Այնտեղ Ֆրանսիան և Անգլիան իրար հետ մըր-
ցակցում էին մերթ Թուրքիայում, մերթ Պարսկաստանում վարած իրենց դի-
վանագիտական միջոցառումներով, որոնց նպատակն էր քրիստոնյա ժողո-
վուրդների՝ ցանկացած ռուսական արշավանքները խափանելը: 1801 թ. Վրաս-
տանի՝ Ռուսաստանի հետ միացումից հետո Անգլիան Պարսկաստանի հետ
զաշինք է կնքում: Այն ժամանակ Բոնապարտը զորավար Սեբաստիանիին
հանձնարարում է համաձայնագիր պատրաստել Թուրքիայի հետ, որը ստո-
րագրում է 1802 թ.: Դրանից հետո նա պատգամավոր է ուղարկում Թեհրան՝
համոզելով պարսիկներին, որ Ֆրանսիայի օգնութեամբ հնարավոր կլինի ռուս-

¹⁵ J. Chahan de Cirbied, Avis aux Arméniens qui habitent les provinces méridio-
nales de l'Empire russe sur la culture du coton herbacé, Paris, 1816 (14 էջ).

¹⁶ J. Chahan de Cirbied, Histoire arménienne, détails sur les changements politi-
ques qu'ont eu lieu en Géorgie et en Arménie dans les premières années du XIX
siècle, Paris, 1818 (40 էջ).

ներին դուրս մղել Անդրկովկասից; Ֆրանսիացիներին խնդրանքով Պոլիս գործուղված պարսիկ դիվանագետները 1803 թ. թուրքերին առաջարկում են կազմակերպել համերաշխ զինվորական հարձակում Ռուսաստանի դեմ: Միևնույն ժամանակ Սեբաստիանին երկու պետություններին հորդորում է հաշտվել և միացնել ջանքերը: Նա սուլթանին խոստանում է զենք և պաշար մատակարարել, եթե պատերազմի ուսնների դեմ: Եվ իրոք, շուտով ֆրանսիացի ճարտարագետներ և զինվորական հրահանգիչներ են ժամանում Պոլիս: 1804 թ. Պարսկաստանը պատերազմում է Ռուսաստանի դեմ: Վերջինս իսկույն մի քանի հաղթանակ է տանում: Հաջողություններին նպաստում է հայ բնակչության աջակցությունը: Էջմիածնի սուրբ Աթոռը թալանվում է մահմեդականների կողմից: Թեհրանում գտնվող ֆրանսիացի դեսպանը՝ զորավար Գարդանը, պատմում է, որ հայրապետական տպարանի տառերը ձուլվում են հրացանի գնդակ սարքելու համար...

1806 թ., այն ժամանակ, երբ թուրքիան իր հերթին պատերազմ սկսելու վրա է թե՛ Կովկասի և թե՛ Դանուբի ճակատներում, Նապոլեոնը հանձնարարում է Եգիպտոսի իր նախկին թարգմանչին՝ արևելյան լեզուների ուսումնարանի պրոֆեսոր Ամադեյ Ժորբերին գաղտնի պատգամ հասցնել Ֆեյթ Ալի Շահին: Ժորբերը մեկնում է Արևելք, բայց ձեռքակալվում, բանտարկվում է Հայաստանում, Մասիսի ստորոտին՝ Բայազետի օսմանյան փաշայի կողմից: Մի քանի ամիս գերի մնալուց հետո ազատ է արձակվում և ներկայանում է կայսերը Պրուսիայի Ֆինկենշտայն քաղաքում, որտեղ Ֆրանսիան և Պարսկաստանը զինվորական պայմանագիր են կնքում 1807 թ. մայիսի 4-ին: Պայմանագրի նպատակն է սկզբունքորեն համակարգել թուրքիայի և Պարսկաստանի հարձակումը Ռուսաստանի դեմ: Սակայն 1807 թ. հունիսի 18-ին փոքր Ղարաքիլիսայում թուրքերը ծանր պարտություն են կրում ուսնների կողմից: Դրանից հետո զորավար Գարդանի խնդրած պարսկական հարձակումը անհույս և աննպատակ է դառնում: Երասիսի ձորում ֆրանսիացի ճարտարագետ Վերդեյը ամրացնում, վերանորոգում է Երևանի բերդը: Այսպիսով, պարսիկները արդյունավետ դիմադրում են Գուղովիչի վարած ռուսական պաշարմանը 1808 թ. սեպտեմբերից մինչև նոյեմբեր: Ռուսների առաջխաղացումը կասեցվում է 20 տարով:

Սակայն 1807 թ. հուլիսի 8-ին Տիսիտում Ալեքսանդրի և Նապոլեոնի միջև եղած տեսակցության հետևանքով ֆրանսիացիները այլևս ի վիճակի չեն շարունակել բացահայտ հակառուսական քաղաքականություն Արևելքում: Ուստի և ուժեղանում է Անգլիայի ազդեցությունը: Անգլիան նոր դաշնագրեր է կնքում 1809 թ. հունվարի 5-ին թուրքիայի, իսկ մարտի 12-ին Պարսկաստանի հետ: Ֆրանսիայի հետ պատերազմը վերսկսելու պատճառով, նորանոր հաղթանակներ տանելով հանդերձ, ուսնները ստիպված խաղաղություն են առաջարկում թուրքերին, 1812 թ. մայիսի 16-ին վերադարձնելով նրանց Ախալքալաքը:

Մինչ այդ, Հակոբ Շահան Զրպետյանը Նապոլեոնին խորհուրդ էր տվել Թեհրան գործուղել 1811 թ. իր նախկին ուսանող Միր Դաուդ Սատուր Մելիք Շահնազարյանին: Ավելորդ է հիշատակել, որ վերջինս Մելիք Շահնազարների նորջուղացի հռչակավոր գերդաստանի զավակ էր: Զրպետյանի հետ ծանոթացել էր Փարիզում: Հետագայում Արևելյան լեզուների ուսումնարանի տնօրենի՝ Լուի Լանգլեսի հետ ֆրանսերեն հրատարակեց Պարսկաստանի երկհատորանոց արժեքավոր նկարագրությունը¹⁷: Միր Դաուդին ոչ միայն հա-

¹⁷ Mélik-Schahnazar (David Zadour de), Etat actuel de la Perse. Imprimé en persan et traduit en arménien et français par Chahan de Cirkied et L. Langlès.

չողվեց Շահին համոզել, որ շարունակի պատերազմը Ռուսաստանի դեմ, այնպես որ ռուսները հարկադրվեցին երկրորդ ճակատը պահել Կովկասում՝ մինչ ֆրանսիացիները հարձակվում էին Եվրոպայում, այլև Փարիզ վերադարձավ Շահի կողմից շնորհված դեսպանի կոչումով: Նապոլեոնն այնքան գոհ մնաց նրա գործունեությունից, որ նրան սլարգեատրեց պատվո սրով:

Ֆրանսիացիների՝ Ռուսաստան մտնելը իմանալուն պես շահը ռուսներից պահանջեց հին՝ Վրաստանի միացումից առաջ եղած, սահմանների վերականգնումը: Բայց Նապոլեոնի պարտությունն ու աղետալի նահանջը նրան հարկադրեցին ստորագրել Գյուլիստանի հաշտությունը 1813 թ. հոկտեմբերի 13-ին՝ ընդունելով ռուսաց գերիշխանությունը Վրաստանի, Արևելյան Անդրկովկասի և Հայաստանի մի քանի գավառների վրա: Սակայն Երևանն ու Երասխի դաշտը դեռևս բացառվում էին:

Պատերազմի սկզբից մինչև վերջը ռուսները աջակցություն ստացան հայ կամավորների և, ընդհանրապես, հայ բնակչության կողմից: Ավելորդ է հիշատակել մայր Աբրամովի գործը նոր Նախիջևանում: Մեջբերել կարելի է միայն Մինաս Զերազի պատմած առասպելական ավանդույթը: Իբր, երբ Նապոլեոնը հասկացել էր, թե ինչպես էր թշնամին որոշել դիմադրել արշավանքին՝ հրդեհելով ամբողջ երկիրը, չէր ցանկացել ընդունել, թե այդպիսի հրենարքը կարող էր ռուսաց ուղեղի արգասիք լինել, այլ վճռականորեն հաստատել էր, որ հավանաբար «աղվես Հայ ծերունու մատը խառն պետք է լինի այս գործում»:

Այսպիսով, թեպետև Նապոլեոնը ծանոթ է եղել մի քանի հայերի հետ, բայց Հայաստանը որպես պետություն, իսկ հայ ժողովրդին որպես ազգ չի ճանաչել: Ֆրանսիայում և Իտալիայում շարունակել է նախորդ արքաների արևելագիտական ավանդույթները և նպաստել է հայագիտությանը: Սակայն արևելքում ամեն կերպ ջանացել է զինվորական օպնություն ցույց տալ Հայաստանը իրար մեջ բաժանած Թուրքիային և Պարսկաստանին, որպեսզի նրանք դուրս գան Ռուսաստանի դեմ: Հավանաբար լավ չի հասկացել մահմեդական պետությունների անխուսափելի անկումը և չի կանխատեսել, թե որքան հայերը կարող էին խանգարել Թուրքիային և Պարսկաստանին Ռուսաստանի դեմ վարած պատերազմների ժամանակ: Թերևս ուրիշ ելք չի տեսնեցել:

Այդուամենայնիվ, անբավարար միջոցներով հանդերձ, իր քաղաքականությունը եվրոպական տեսանկյունից համեմատաբար արդյունավետ է եղել: 1808 թ., խափանելով Երևանի գրավումը և թուրքերին հնարավորություն տալով ստորագրելու 1812 թ. ոչ աղետալի հաշտության դաշնագիրը, կես դարով հետաձգել է, այսպես կոչված, «Հայկական հարցը», որը «կովախնձոր» պիտի դառնար մեծ տերությունների միջև 19-րդ դարի երկրորդ կեսին:

ЖАН-ПЬЕР МАЭ — Наполеон и армяне. — Материал представляет обстоятельство и причины активного интереса Наполеона к армянам и армянской культуре, роль Французского императора в исторической судьбе армянского народа. Наполеон своими решениями способствовал развитию арменоведения в Европе, проявил добродетельное отношение к Мхитаристам Венеции, по его личной инициативе в Государственном институте восточных языков были организованы курсы обучения армянскому языку. В результате — появление во Франции плеяды выдающихся арменоведов, учеников Акопа Шагана Джрпетяна.